



ՌՈՍԳՈՍԱՏՐԱՆ-ԱՐՄԵՆԻԱ

ՀՐԴԵՀԻՑ ԵՎ ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎՈՂ ԱՅԼ ՎՆԱՄՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցման իր պարտավորություններից, եթե՝

ա) Ապահովադիրը տեղի ունեցած պատահարի մասին իրեն հայտնի դառնալուց հետո, 6 ժամվա ընթացքում պատահարի մասին չի հայտնել համապատասխան իրավասու մարմիններին.

բ) տեղի ունեցած պատահարի մասին 24 ժամվա ընթացքում չի հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին.

գ) ապահովագրական պատահարը հանդիսացել է Ապահովադրի (Շահառուի) կամ նրա ընտանիքի անդամի միտումնավոր գործողությունների արդյունք, կամ վնասը պատճառվել է նրանց կողմից կատարված՝ իրավասու մարմինների կամ դատարանի կողմից որպես դիտավորությամբ կատարված հանցագործություն որակված, գործողությունների արդյունք.

դ) Ապահովադիրը խախտել է սույն Պայմաններից բխող պարտավորություններից որևէ մեկը, որի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառները, հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը.

ե) Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից փոխհատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքի իրագործումն Ապահովադրի (Շահառուի) մեղքով դարձել է անհնարին: Ապահովագրողն ամբողջությամբ կամ համապատասխան չափով ազատվում է ապահովագրական հատուցումից և իրավունք ունի պահանջել ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ.

զ) Ապահովադիրը (Շահառուն), Ապահովադրի (Շահառուի) ընտանիքի անդամները չեն կատարել սույն Պայմանների 10.3.3 ենթակետում նշված պահանջը, որի հետևանքով վրա է հասել ապահովագրական պատահարը՝ ինչը հաստատվել է համապատասխան իրավասու մարմինների եզրակացությամբ, այդ դեպքում Ապահովագրողն իրավունք ունի տուգանքի տեսքով ապահովագրական հատուցման չափը նվազեցնել 20%-ով, իսկ նշված պարտավորությունները միտումնավոր չկատարելու դեպքում՝ ամբողջությամբ մերժել ապահովագրական հատուցման վճարումը:

2. Ապահովագրության դեպքեր չեն համարվում այն իրադարձությունները, որոնք առաջացել են©

ա) միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով.

բ) ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ ռազմական միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, ժողովրդական հուզումների ցանկացած դրսևորման, գործադուլների հետևանքով.

գ) պետական մարմինների կարգադրությամբ իրականացված ապահովագրության օբյեկտի առգրավման, բռնագրավման, ոչնչացման կամ վնասելու հետևանքով.



ՈՍԱԳՈՍԱՏՐԱՆ-ԱՐՄԵՆԻԱ

դ) քայքայման, կոռոզիայի կամ այլ բնական երևույթների հետևանքով ապահովագրության օբյեկտի հատկությունների փոփոխությունների արդյունքում.

ե) ապահովագրության օբյեկտների ֆիզիկական մաշվածության (կառուցվածքների, սարքավորումների, նյութերի)« դրանց շահագործման նորմատիվ ժամկետները խախտելու, ապահովագրության օբյեկտների արտադրական« շինարարական արատների, ապահովագրության օբյեկտների կառուցվածքային թերությունների, անորակ կատարված մոնտաժային աշխատանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով.

զ) ապահովագրության օբյեկտը կրակով մշակելու կամ այլ ջերմային եղանակով դրա վրա ազդելու հետևանքով (օրինակ՝ չորացման, եփման, արդուկման, ապխտման, տապակելու, տաքացման եղանակով մշակման, հրդեհի հետևանքով այրման (օրինակ՝ կրակի աղբյուրին շատ մոտ տարածությունում գույքի տեղադրման դեպքում և այլն).

է) ծածկերից, պանելային շենքերի կարերից, վերնահարկից, պատշգամբներից, բաց պատուհաններից, դռներից և այլն, ինչպես նաև միտումնավոր կատարված կամ վթարային վիճակում գտնվելու հետևանքով կամ շինարարական արատների հետևանքով առաջացած կարերից, անցքերից կամ բացվածքներից՝ ապահովագրված օբյեկտներ, շենքեր կամ բնակարաններ, որտեղ գտնվում է ապահովագրված գույքը, տեղումների ներթափանցման արդյունքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով.

ը) էլեկտրական հոսանքի կարճ միացման, մեկուսացման խախտումների և այլ վթարների և տեղադրված ինժեներական էլեկտրասարքավորումների և էլեկտրական լարերի ծխահարման, հալման արդյունքում, եթե վերջիններս չեն եղել ապահովագրական ռիսկի ազդեցության հետևանք.

թ) ապահովագրական ռիսկի ազդեցության հետևանք չհանդիսացող փլվածքից (փլուզումից).

ժ) Ապահովադրի (Շահառուի) ապահովագրության օբյեկտում պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքավորումների պահպանման, պատրաստման և կիրառման, ինչպես նաև քիմիական և ֆիզիկական փորձերի անցկացման հետևանքով.

ի) ապահովագրական պատահար չեն համարվում կենցաղային էլեկտրասարքերի, էլեկտրոնային սարքավորումների, հեռուստա-աուդիո-տեսա-ռադիո սարքավորումների աշխատանքի խաթարման կամ խափանման դեպքերը, որոնք առաջացել են.

իա) ապահովագրության տարածքից դուրս տեղի ունեցած տարերային աղետներից կամ դրանց հետևանքով.

իբ) էլեկտրաէներգիայի ոչ որակյալ մատակարարման (ցանցում լարման լրիվ անկում, լարման խախտումներ, գերլարման, բարձրավոլտ լարման բռնկումներ, հաճախականության տատանումներ և այլն) արդյունքում.

իգ) էլեկտրացանցում կարճ միացման (էլեկտրալարերի խճճում կամ ճկում, մեկուսիչների վնասում, ներքին լարերի վնասում և այլն) արդյունքում: